Հովհաննես Թումանյան

Քրիստոս հարյավ... Ա՛խ, և այս հոծ...

Քրիստոս հարյավ... Ա՛խ, և այս հոծ
Մութ-մըռայլից, երանի,
Հառներ հոգիս կըրակ ու բոց,
Զըվարթ հոգիս երբեմնի:

Եվ, երանի, նույն սաստկությամբ
Սիրո կիրքը ևս հառներ,
Երկինքս էլի դառնար անամպ,
Միտքըս ուժգին սավառներ...

Լո՛ւռ կաց, անմիտ, ի՞նչ ես լալիս

Վըհատ ձայնով ծերության,
Դեռ քո ճամփին լույս է տալիս
Ճառագայթը վաղորդյան:

Եվ մըռայլից, որ կա իջած
Ծանր ու տարտամ քո սըրտին,

Պիտի հառնեն տանջված, խաչված
Ցընորքները քո նախկին:

1893

Յաւտուկ Պոեմ